ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն

(առարկա)

Թեմա՝ **Համագործակցային ուսուցման մեթոդների կիրառության իմ փորձից**

Կազմեց՝ **Արուս Ղազարյան**

Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ **Լուսինե Սողոմոնյան**

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

1. Ներածություն 3-5

2. Համագործակցային ուսուցման մեթոդներ 5-9

3. Գործնական համատեքստ 10-16

4. Տվյալների մշակում և վերլուծություն 16-18

5. Եզրակացություն 19

6. Գրականության ցանկ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը: Համագործակցային ուսումնառությունը տեղի է ունենում, երբ աշակերտներն աշխատում են միասին՝ զույգերով կամ փոքր խմբերով, մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ անհատական պատկերացումները միախառնելով՝ նոր միտք, նոր համադրություն կամ աննախադեպ նորարարություն իրականացնելու համար1:

Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ2:

Համագործակցային ուսումնառության հիմնական տարրերն են՝

Դրական փոխկախվածություն

Աշակերտները զգում են, որ ընդհանուր առաջադրանքը կատարելու համար իրենք միմյանց կարիքն ունեն: Ուսուցիչը կարող է դրական փոխկախվածությունը չձևավորել՝ սահմանելով նպատակներ, որ միաժամանակ թե անհատական են, թե ընդհանուր (օրինակ՝ << Սովորիր և հավաստիացիր, որ խմբի բոլոր անդամները սովորում են>>), համատեղ մրցանակներ (միավորների խմբային ձեռքբերումների համար), կիսովի նյութեր(մեկ մեծ թուղթ ամբողջ խմբի համար կամ ամբողջ խմբին անհրաժեշտ ինֆորմացիայի հատվածների տրամադրում խմբի առանձին անդամներին), հանձնարարված դերեր (ամփոփող, խմբի անդամներին ոգևորող, լրամշակող):

Փոխադարձ անմիջական աջակցություն

Աշակերտները, միմյանց օգնելով, իրար հետ մտքեր փոխանակելով և սովորելու մեջ մեկմեկու քաջալերելով, խթանում են միմյանց ուսումնառությունը: Աշակերտներն իրենց դասընկերներին բացատրում են, նրանց հետ քննարկում, սովորեցնում են իրենց իմացածը: Ուսուցիչը խմբերին այնպես է դասավորում, որ աշակերտները միասին նստեն ու զրուցեն առաջադրանքի տարբեր կողմերի մասին:

Անհատական հաշվետվություն

Յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը հաճախ գնահատվում է, և ստացված արդյունքը տրվում է ինչպես աշակերտին, այնպես էլ գումարվում է խմբի միավորներին: Ուսուցիչը կարող է անհատական հաշվետվության համար այս կամ այն աշակերտին տալ անհատական առաջադրանք կամ պատահական ընտրությամբ խմբի մի անդամին խնդրել պատասխանել ամբողջ խմբի փոխարեն: Սա պետք է արվի մեծ զգուշությամբ և անպայմանորեն բարյացակամ մթնոլորտում. նպատակը աշակերտի ձեռքբերումն ի հայտ բերելն է և ոչ երբեք ցուցադրելը, որ մեկը մյուսներից պակաս ներդրում ունի խմբի ընդհանուր արդյունքի մեջ:

Միջանձնային և փոքր խմբային հաղորդակցական հմտություններ

Խմբերը չեն կարող արդյունավետ կերպով գործել, եթե աշակերտները չունեն կամ չեն կիրառում համատեղ աշխատանքի համար անհրաժեշտ հասարակական- հաղորդակցական հմտություններ: Ուսուցիչները պետք է այս հմտությունները նպատակաուղղված կերպով սովորեցնեն երեխաներին, ճիշտ այնպես, ինչպես ակադեմիական հմտություններն են սովորեցնում: Համագործակցային հմտությունները ներառում են ղեկավարումը, որոշում կայացնելը, վստահություն չձևավորելը, հաղորդակցվելը և կոնֆլիկտի կառավարումը:

Խմբային վերլուծություն

Հարկավոր է հատուկ ժամանակ տրամադրել խմբին՝ քննարկելու համար, թե ինչ հաջողությամբ են հասնում առաջադրված նպատակին, կարողանում հաստատել ու պահպանել արդյունավետ աշխատանքային հարաբերություններ։ Խմբային վերլուծություն անցկացնելու համար ուսուցիչը կարող է երեխաներին տալ այնպիսի առաջադրանքներ, ինչպիսիք են, օրինակ՝ ա) քննարկել և ընտրել առնվազն երեք այնպիսի առաջադրանքներ, որոնք խմբին կօգնեն բարձր արդյունքի հասնել կամ բ) գտնել առնվազն մեկ առաջադրանք, որը խմբին կօգնի առավել մեծ հաջողության հասնել։ Ուսուցիչը կատարում է իր դիտարկումները և խմբին ու ընդհանրապես ամբողջ դասարանին ասում է իր կարծիքն այն մասին, թե որքան արդյունավետ են խմբերը համագործակցում։

Ստորև ներկայացվում են համագործակցային ուսուցման հիմնական մեթոդները, դրանց բնութագրությունն ու իմ փորձի օրինակը։

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Համագործակցային ուսուցման մեթոդներից են.

1. Զույգերով ընթերցման/ զույգերով ամփոփման դաս

2. Աշակերտների թիմային առաջադիմություն

3. Երեք բանալի և մեկ կողպեք

4. Հինգրոպեանոց ազատ շարադրանք

5. Կանխատեսումներ զույգերով

<u>Զույգերով ընթերցման/ զույգերով ամփոփման դաս</u>

Այս մեթոդը մշակել է Դոն Դնսերոն՝ Տեքսասի քրիստոնեական համալսարանի իր գործընկերների հետ։ Այս մեթոդը հատկապես օգտակար է, երբ տեքստը բավականին ծավալուն է։ Սա դյուրացնում է ծավալուն և փաստագրությամբ գերհագեցած տեքստերի ընկալումը։ Մասնակիցները կազմում են 1-ից մինչև 4 համարները կրող զույգեր։ Յուրաքանչյուր զույգը ստանում է իր համարը՝ 1,2,3

կամ 4։ Ուսուցիչը տեքստը բաժանում է 1-4 հատվածների, որոնք պետք է բաժանվեն նույն համարները կրող զույգերին։

Զույգի յուրաքանչյուր անդամ պետք է խաղա երկու որոշակի դեր։ Յուրաքանչյուրը պետք է սկզբում ստանձնի մեկ դեր, ապա կարդալու ընթացքում դերերը պետք է փոխվեն։

ա) Առաջին դերը զեկուցողի դերն է։ Զեկուցողի աշխատանքը կայանում է նրանում, որ նա ուշադիր կարդա հատվածը և բովանդակությունը հանրագումարի բերի։ Այս աշխատանքն ավարտելուց հետո զեկուցողը պետք է իր սեփական բառերով ներկայացնի հատվածի բովանդակությունը։

բ) Մյուս դերը պատասխանողի դերն է, որը նույնքան կարևոր է այս վարժության համար։ Նա նույնպես ուշադիր կարդում է հատվածը։ Զեկուցողին լսելուց հետո նա վերջինիս տալիս է հատվածի վերաբերյալ ցանկացած հարց, որը կարող է ավելի հստակեցնել պատկերը կամ երևան հանել նոր ինֆորմացիա։

<<Ինչ կասես. . .>>

<<Հիշում ես. . .>>

<<Այնտեղ մի բան կար. . . մասին>>։

Զույգ կազմած մասնակիցներից յուրաքանչյուրը պետք է երկու դերն էլ խաղա, այնպես որ տեքստը մասերի կբաժանվի երկու անգամ։ Տեքստը նախ բաժանվում է չորս մասի՝ զույգերին համապատասխան հատվածը տալու համար, ապա յուրաքանչյուր հատվածն իր հերթին բաժանվում է երկու կեսի։ Սա արվում է, որպեսզի առաջին կեսում մի անձը լինի զեկուցող, մյուսը՝ պատասխանող։ Իսկ երկրորդ կեսում դերերը փոխվեն։

Նրանք պետք է պատրաստ լինեն զեկուցելու նաև ամբողջ առաջադրանքի համար, որպեսզի լիովին պատրաստ լինեն իրենց հատվածի համար։

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ։

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից։ Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը։ Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը։ Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում։ Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները։ Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին։

Այն համարվում է առավել հեշտ կիրառվող մեթոդներից մեկը և առանձնապես օգտակար է համագործակցային ուսուցման մեթոդները կիրառող սկսնակ ուսուցիչների համար։ Այն խթանում է սովորողների համագործակցությունը և մասնակցությունը։ Մեթոդի կիրառության շրջանակներում կիրառվում է գնահատ- ման այնպիսի համակարգ, որի պարագայում աշակերտը շահագրգռված է ոչ միայն իր, այլև խմբի բոլոր անդամների ուսումնառությամբ։ Ընթացքի նկարագրություն։ Դաս-դասարանային ավանդական մեթոդով նոր թեման բացատրելուց հետո դասարանը բաժանել 4-5 հոգանոց տարասեռ խմբերի՝ յուրաքանչյուր խմբում ընդգրկելով գերազանց, միջին և ցածր առաջադիմությամբ աշակերտների, ապահովելով նաև տղա-աղջիկ հավասարությունը (հնարավորության դեպքում)։ Խմբերին տրվում է նոր թեմային առնչվող հանձնարարություն՝ նշելով, որ հանձնարարության կատարումը համարվում է ավարտված, երբ խմբի յուրաքանչյուր անդամ յուրացրել է նյութը։ Ապա ստուգվում է նյութի յուրացման աստիճանը։ Այս ընթացքում, սակայն, թիմի անդամներն արդեն չեն կարող օգնել միմյանց. յուրաքանչյուրն ինքնուրույն է կատարում առաջադրանքը։ Առաջադրանքի

կատարման ստուգման համար կիրառվող գնահատման համակարգն այնպիսին է, որ յուրաքանչյուր աշակերտ իր գնահատականով իր ներդրումն է անում խմբի ընդ հանուր ցուցանիշում: Գնահատման միավորների սանդղակի ընտրությունը ուսուցչի հայեցողության տակ է: Համագործակցային ուսուցման այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է սովորողների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ սովորողների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են որոշակի ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին և բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պետք է մի կողմից աջակցեն իրենց դասընկերներին բարելավելու իրենց ցուցանիշները, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այսպիսով՝ խմբի յուրաքանչյուր աշակերտ ունի սովորելու և դասընկերներին օգնելու խթան:

<u>Երեք բանալի և մեկ կողպեք</u>

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

<u>Հինգրոպեանոց ազատ շարադրանք</u>

Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Կանխատեսումներ զույգերով

Գոյություն ունեն բազմաթիվ արագ գործադրվող մեթոդներ, որոնք նպաստում են ուսումնական գործընթացում սովորողների համագործակցությանը: Այս պարզ մեթոդները հաճախ հանդիսանում են գերազանց միջոցներ՝ աշակերտներին զույգերով կամ փոքր խմբերով աշխատելուն վարժեցնելու համար: Դրանցից մեկը կոչվում է <<Կանխատեսումներ զույգերով>>: Աշակերտները պետք է ընթերցեն, օրինակ՝ տրված պատմվածքը: Ուսուցիչը հարցնում է՝ արդյոք որևէ մեկը կարդացե՞լ է այն: Եթե պարզվի, որ այո, ուսուցիչը առաջարկում է մեկ անգամ ևս լսել այն: Այնուհետև նրանց խնդրում է զույգեր կազմել և թուղթ ու մատիտ վերցնել: Աշակերտները պետք է ուշադիր հետևեն ուսուցչի կարդացած բառերի ցուցակին: Դրանք վերաբերում են կերպարներին, միջավայրին, իսկ դրանցից մի քանիսն էլ՝ բուն պատմվածքին:

Այնուհետև զույգերով քննարկում են մի ընդհանուր գաղափար, որը կարող է հուշել պատմվածքի թեման, և փորձեն կանխատեսումներ անել պատմվածքի վերաբերյալ: Տրվում է 5-6 րոպե քննարկումների և գրառումների համար: Իրենց գրառումներին նրանք պետք է անդրադառնան պատմվածքի ընթերցանության ընթացքում:

Կանխագուշակման այս վարժությունը կարող է արվել մեկ անգամ դասի սկզբում, կամ զույգերը կարող են հասնել մի կետի և պատմվածքի ծավալմանը զուգահեռ փոփոխել իրենց կանխագուշակումները:

Գործնական համատեքստ

24 տարի է, ինչ աշխատում եմ Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցում: Մանկավարժի աշխատանքը սիրած գործով զբաղվելուց բացի ինձ համար նաև բարեհաճ առաքելություն է, որ պիտի կրեմ: Հետազոտական աշխատանքս իրականացրել եմ 6-րդ դասարանում, որտեղ սովորում է 25 աշակերտ: : Դասարանում կան աշակերտներ, ովքեր այս 6 տարիների ընթացքում դպրոց են հաճախել դժվարությամբ, շատ բացակայություններով: Հատկապես տղաների մեջ կան երեխաներ, ովքեր փորձում են իրենց վեր դասել մյուսներից, և հաճախ առկա է լինում անհաշտ մթնոլորտ: Հետազոտությանս առաջնային խնդիրը այն էր, որ բոլոր աշակերտների համար ապահովենք հոգեբանական հարմարավետություն և մտածելուն միտված մթնոլորտ, հատկապես նրանց, ովքեր երբեմն ճնշված են զգում իրենց:: Ինքնուրույն, առանց ուղղորդության այդ սովորողները ոչինչ չեն անում, բայց երբ նրանք հայտնվում են խմբում, տարօրինակ փոփոխություն է նկատվում նրանց վարքագծում: Համագործակցային ուսումնառության արդյունքում կազմակերպված,լավ առաջադիմություն ցուցաբերած սովորողը(հատկապես իրեն վեր դասող) կարող է լավ օրինակ ծառայել, օգնել ընկերոջը: Ինչպես նաև փորձը ցույց է տվել, որ աշակերտները մեկը մյուսին ավելի լավ են հասկանում ու բացատրում, քան ուսուցչին: Համագործակցային մոտեցման դեպքում ուսուցումը դառնում է ավելի արդյունավետ, որից օգտվում են բոլորը, որովհետև՝

ա/ ընդհանուր նպատակը միավորում է բոլորին՝ ստիպելով օգնել, հանդուրժել միմյանց

բ/ ձևավորում են իրար ճանաչելու, լրացնելու հմտություններ

գ/ ընդհանուր աշխատանքը խթանում է մտածողությունը, առաջացնում է վստահություն

Ալեքսանդր Ռիվլինին հուզում էր այն հարցը, որ ուսուցիչը միանգամից սովորեցնում է ամբողջ դասարանին, ընդ որում՝ բոլորին միատեսակ: Նման

ուսուցումը նա համարում էր <<հոտային>>: Նրա մտահոգության առարկան ուսուցչի աշխատանքը թեթևացնելն ու առավել արդյունավետ դարձնելն էր: Ռիվինը միաժամանակ գտնում էր, որ աշակերտները ևս ավելի քիչ ժամանակ և ուժեր պետքէ ծախսեն, բայց իմանան ավելին: Ռիվինը նկատել էր,որ աշակերտն արագ լավ է յուրացնում նյութը, եթե այն հաղորդում է ուրիշին:

Ստորև ներկայացնում եմ դասապլանի 2 օրինակ՝ ըստ որոնց իրականացրել եմ հետազոտությունս:

Դասապլան 1

Դասարան - 6 -րդ

Ամիս,ամսաթիվ- 08.09.2022թ.

Ուսուցչուհի – Արուս Ղազարյան

Առարկա - Մայրենի

Դասի թեման- Ստեփան Զորյան <<Մի կյանքի պատմություն>>

Դասի տիպը - Նոր նյութի հաղորդում

Մեթոդներ, հնարներ –Կանխատեսումներ զույգերով

Օգտագործվող նյութեր-դասագիրք, Ստ. Զորյանի <<Մի կյանքի պատմություն>>, գրատախտակ

Դասի նպատակները

1.. Ընկալել տալ մարդկային /ընտանեկան/ հարաբերություններում բարձր արժեքները, նպաստել անձի ձևավորման գործում ընտանիքի դերի և նշանակության գիտակցմանը հասնելուն , բառի գործածության հետ կապված

գիտելիքի ընդլայնում, ընկալել տալ բառերի ճիշտ ընտրության կարևորությունն ըստ խոսքային իրադրության:

2. Խմբում աշխատելու,դասընկերներին հանդուրժելու կարողություններ

3. Դասընկերների փոխըմբռնմամբ և աջակցությամբ պասիվ աշակերտներին մղել ինքնաարտահայտման,ինքնաճանաչման և ինքնադրսևորման

Վերջնարդյունքները

Աշակերտները կկարողանան՝

1 . Ներկայացնել <<Մի կյանքի պատմություն>> ստեղծագործությունից հատվածի իրադարձություններն ու գաղափարը

2. Ներկայացնել իրենց ընտանիքի անդամներին

3. Գտնել բառերի հոմանիշները և գործածել առանձին նախադասություններում

4. Գտնել բառերի հականիշները և մեկ զույգ գործածել միևնույն նախադասության մեջ։

Ընթացքը

Սկիզբ /5 րոպե/

1. Ծանոթացում դասի նպատակներին և վերջնարդյունքներին

2. Աշակերտներին նախապատրաստել <<Կանխատեսումներ զույգերով>> մեթոդով դասի իրականացմանը։

Հիմնամաս /25 րոպե/

1. Դասարանին հանձնարարել զույգերով գրառել իմ կարդացած բառերն ու բառակապակցությունները։ Բոլոր զույգերը պիտի մասնակից լինեն աշխատանքներին, որին և հետևում եմ։Այնուհետև հանձնարարում եմ զույգի հետ քննարկել մի ընդհանուր գաղափար և կանխատեսումներ անել ստեղծագործության վերաբերյալ։ Տրվում է 5-6 րոպե։

2. Զույգերը ներկայացնում են հանձնարարությունը, աշխատում եմ արտահայտվելու հնարավորությունը տալ առավել պասիվ, ինքնարտահայտվելուց խուսափող աշակերտին ։

3. Կարդում եմ դասագրքի դասը։ Այս ընթացքում աշակերտները համեմատություններ են անում իրենց կռահածի հետ։Այնուհետև ներկայացնում

են մարդկային հարաբերություններում բարձր արժեքների իրենց ընկալումը։ Ես նրբորեն, առանց վիրավորելու որևէ մեկին զուգահեռներ եմ անցկացնում նաև նրանց ընկերական հարաբերությունների միջև։

4. Հանձնարարում եմ կատարել բառային աշխատանքներ՝

Գտնել կարմիր գրված բառերի հոմանիշները։ Ընտրել մեկ զույգ և գործածել առանձին նախադասությունների մեջ։

Գտնել արշալույս, ավետել, թանկություն բառերի հականիշները։ Ընտրել մեկ զույգ և գործածել միևնույն նախադասության մեջ։

Ամրապնդում և ամփոփում /10 րոպե/

Առաջադրել աշակերտներին թերթիկների վրա գրել, թե զույգային աշխատանքի արդյունքում ինչ սովորեցրեց ինքը կողքինին։

Տնային աշխատանք/5ր/

Բառային աշխատանք . տեքստում գտնել այն բառակապակցությունները, որոնց կազմում կան ինչպես, նման, պես բառերը։ Դրանք գործածել ես, դու դերանունների հետ։

Դասապլան 2

Դասարան - 6 -րդ

Ամիս,ամսաթիվ-20.09.2022թ.

Ուսուցչուհի – Արուս Ղազարյան

Առարկա - Մայրենի

Դասի թեման- Համո Բեկնազարյան <<Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի>>: Խոսակցական բառապաշար

Դասի տիպը - Նոր նյութի հաղորդում

Մեթոդներ, հնարներ –Մտագրոհ, 5 րոպեանոց շարադրանք

Օգտագործվող նյութեր-դասագիրք, գրատախտակ, պաստառ, կպչուն թերթիկներ

Դասի նպատակները

1. Ընկալել տալ ընտանեկան հարաբերություններում բարձր արժեքները, նպաստել անձի ձևավորման գործում ընտանիքի դերի և նշանակության գիտակցմանը հասնելուն, ուսուցանել բառին բնորոշ առանձնահատկությունները, ընկալել տալ բառերի ճիշտ ընտրության կարևորությունն ըստ խոսքային իրադրության:

2. Զույգերով աշխատելու,դասընկերներին հանդուրժելու կարողություններ

3. Դասընկերների փոխըմբռնմամբ և աջակցությամբ պասիվ աշակերտներին մղել ինքնաարտահայտման,ինքնաճանաչման և ինքնադրսևորման

Վերջնարդյունքները

Աշակերտները կկարողանան՝

1 . Ներկայացնել <<Հուշեր կինոդերասանի և կինոռեժիսորի>> հատվածի բովանդակությունն ու գաղափարը

2. Ներկայացնել իրենց ընտանիքի հպարտությունը, իրենց հայրիկներին

3. Առանձնացնել իրենց ընկերների և ընտանիքի կողմից գործածվող բառապաշարը

Ընթացքը

Սկիզբ /5 րոպե/

1. Ծանոթացում դասի նպատակներին և վերջնարդյունքներին

2. Աշակերտներին նախապատրաստել <<Մտագրոհ>>,<<5 րոպեանոց շարադրանք>> մեթոդներովով դասի իրականացմանը։

Հիմնամաս /20 րոպե/

1. Կիրառելով մտագրոհի մեթոդը՝ դասարանին հանձնարարել կպչուն թերթիկների վրա գրել՝ որն է իրենց կարծիքով ընտանեկան բարձր արժեքը և

կպցնել գրատախտակին ապրացված պաստառին։ Դրանք բարձրաձայան կարդալուց հետո անցնել դասագրքի նյութի ուսուցմանը։

2. Կարդում եմ դասագրքի նյութը։ Աշակերտներին հանձնարարում եմ նկարագրել Համո Բեկնազարյանի հորն ու մորը։ Յուրաքանչյուրը իր խոսքով պետք է լրացնի նախորդ պատասխանողին։Այսպիսով կենտրոնանում է

աշակերտների ուշադրությունը և դիմացինի կարծիքը հաշվի առնելու մշակույթը։

Աշակերտներին նստեցնել նախորդ ժամերից տարբերվող զույգերով։

Հանձնարարել զույգերով քննարկել՝ ինչ է ընտանեկան հպարտությունը։Լսել բոլորի կարծիքները։

Այնուհետև ես կներկայացնեմ եմ՝ ինչ է խոսակցական բառապաշարը։

Կհանձնարարեմ տետրերում գրառել իրենց ընկերների, իրենց ընտանիքի անդամների ամենօրյա գործածվող բառապաշարը։ Աշխատանքը դարձյալ պետք է կատարեն զույգերով։

2. Զույգերը ներկայացնում են հանձնարարությունը, աշխատում եմ արտահայտվելու հնարավորությունը տալ առավել պասիվ, ինքնարտահայտվելուց խուսափող աշակերտին ։

Ամրապնդում և ամփոփում /15 րոպե/

Առաջադրել աշակերտներին տետրերում գրել 5 րոպեանոց շարադրանք՝ <<Իմ ընտանիքի հպարտությունը>>վերնագրով: Լսել բոլորին:

Հարցնել նրանց, թե զույգային աշխատանքի արդյունքում ինչ սովորեցրեց ինքը կողքինին:

Տնային աշխատանք/5ր/ Գրել հայկական ֆիլմերում լսած արտահայտությունները, որոնք տպավորվել են հիշողության մեջ:

Վարժություն 5 . բառերը խմբավորել ըստ այունակների՝ գրքային բառեր, խոսակցական բառեր:

Տվյալների մշակում և վերլուծություն

Երկու դասերի հետազոտությունները, աշակերտների ինքնաճանաչողությանը,ինքնագնահատմանը միտված մեթոդների կիրառումը, միմյանց օգնելով ուսումնառության արդյունքների շոշափելիությունը նրանց

կողմից և դրանից բխող արդյունքները հնարավորություն են տալիս կատարել վերլուծություն: Իմ հետազոտական աշխատանքի նպատակն էր թիրախային խմբի աշակերտների ՝ դասերին մասնակցության ապահովումը, ամբողջ դասարանում համագործակցային մթնոլորտի ստեղծումը, մտածողության և սովորել սովորելու կարողունակության խթանումը: Եթե յուրաքանչյուր սովորողի համոզես ու ցույց տաս, որ ինքը ունակ է մտածելու, կարող է և

ընդգրկված է ուսման գործընթացում, ապա հաճույք կստանա, և պրոցեսը կլինի շարունակական:

Երբ սովորողը սովորեցնի ուրիշներին, կսովորի ինքը և միաժամանակ կզարգացնի իր կարողությունները: Ուսումնական գործընթացում սովորողի համար պետք է ապահովել տեղ և ժամանակ, որ նա կարողանա յուրացվող թեմայի շուրջ մտածել, հասկանալ, պարտադիր վերարտադրել, քննարկել յուրացվող նյութի բովանդակությունը և այն ձևակերպել որպես տեքստ, կատարել որոշակի գործողություններ յուրացված թեմայի վերաբերյալ:

Դաս 1 08.09.2022թ.

Հ/հ	Անուն	Առկա խնդիր	Գրանցված հաջողություն
1.	Հ. Համեստ	Կաշկանդված է լինում, լռակյաց	Զույգային աշխատանքում ինքնադրսևորվեց
2.	Գ. Լևոն	Ունի մեծամտանալու հակում	Զույգային աշխատանքում դրսևորեց որպես լավագույն օգնող ընկեր
3.	Ա. Սառա	Համագործակցում է, բայց կաշկանդվում է արտահայտվելիս	Փորձում էր հնարավորինս ազատ արտահայտվել
4.	Ս. Ռուբիկ	Համագործակցում է, բայց կաշկանդվում է արտահայտվելիս	Փորձում էր հնարավորինս ազատ արտահայտվել

Դաս 2 20.09.2022 թ.

Հ/հ	Անուն	Առկա խնդիր	Գրանցված հաջողություն
1.	Ա. Սառա	Աշակերտների մի մասը դժվար էր շփվում նրա հետ	Համագործակցային ռազմավարությամբ շփումը կազմակերպվեցդ
2.	Հ. Համեստ	Կաշկանդված է լինում, լռակյաց, դժվարանում է արտահայտվել	Զույգային աշխատանքում ինքնադրսևորվեց
3.	Գ. Լևոն	Սիրում է՝ միայն ինքը լինի կենտրոնում և միայն ինքը արժանանա գովեստի	Աշխատում էր զույգի հետ այնպես, որ վերջինս արժանանա գովեստի
4.	Ս. Ռուբիկ	Լռակյաց է, սովորաբար չի արտահայտվում	Չնայած ցածր է խոսում, բայց ներկայացնում էր իրենց առաջադրանքը:

Համագործակցային ուսումնառություն իրականացնելիս պատկերը հետևյալն էր.

Շատ ակտիվ մասնակցություն- 50%

Ակտիվ մասնակցություն-30%

Մասնակցություն-20%

Եզրակացություն

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը բովանդակալից ուսումն ապահովող ուսուցման ռազմավարություններ, մեթոդներ կիրառելն է: Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց սովորողների ըմբռնողությունը խթանելու, ստեղծագործական մոտեցմանը, ինքնուրույն ուսումնասիրությանը, սոցիալական համագործակցությանը ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի՝ այն ունի նաև հասարակական գործառույթ: Համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Ուստի որոշում կայացնելու, կարծիք ձևավորելու, խնդիր լուծելու, համատեղ աշխատելու, բազմաթիվ աղբյուրներից օգտվելու, գաղափարներն ու ինֆորմացիան ստեղծագործաբար համադրելու հմտություններ ձևավորումն ու զարգացումը պետք է մշտապես համարվեն ուսումնական պրոցեսի անքակտելի մասը և երբեք չառանձնացվեն բովանդակությունից՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները:

Բոլոր դասերի անցկացման և հետազոտման արդյունքում ես հասա իմ սահմանած նպատակներին. բոլոր աշակերտները հստակ հասկանան, որ իրենք կարող են և պիտի ակտիվ մասնակցեն ուսումնառության գործընթացին, ինչ պիտի սովորեն յուրաքանչյուր դասին, ինչպես պիտի հասնեն նպատակների իրագործմանը և ինչ միջոցներով հասնեն վերջնարդյունքների կատարմանը:

Գրականություն

1. <<Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով>> ծրագրի ուղեցույց 5. համագործակցային ուսուցում

2. Ա. Վ. Պետրովսկի <<Տարիքային և մանկավարժական հոգեբանություն>> 1977 թ.

3. Ձեռնարկ ուսուցիչների համար 2020 թ. << Ուսումնական գործընթացի կազմակերպման արդի մոտեցում:

4. <<Համագործակցային ուսուցում>>Երևան ձեռնարկ<<Անտարես>>